ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРМАВИРА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 02 >> դեկտեմբերի 2014 թ. N 102

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, երկրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N143-Ն հրամանի պահանջները.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2014 թվականի ներքին աուդիտի հաստատված ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունում և Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինություն վարչությունում անցկացնել 2014 թվականի բյուջետային տարվա գործունեության աուդիտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Արայիկ Հակոբյանի և գլխավոր մասնագետներ Վիգեն Խաչատրյանի, Հայկ Պողոսյանի կողմից:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա.Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետին և Արմավիրի մարզի Վաղարշապատի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետին(համաձայնությամբ):
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա.Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 10 աշխատանքային օրյա ժամկետում:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանին:

6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ